Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվական մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգի>> 9-րդ կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ կետի 1-ին մասի դրույթներով.

**որոշում եմ՝**

1. «Հայաստանի էլեկտրական ցանց» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 1-ին հասցեում 08-090-0001-0035 կադաստրային ծածկագիր Վարդանուշ Քալաշյանին պատկանող տարածքում 0.4 կՎ և 0.22 կՎ հզորության էլեկտրամատակարարման աշխատանքներ իրականացնել : 0.4 կՎ ՕԳՄ 489մ\_կառուցում և 0.22 կՎ ՕԳՄ 41մ կառուցում նախագծով նախատեսվող աշխատանքների համար տալ շինարարության թույլտվություն:

2. Կառուցապատման համար ժամկետ սահմանել՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից՝ տասներկու ամիս:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընկերության տնօրինությանը պատշաճ ծանուցման օրվանից:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի շինարարության թույլտվություն տալու մասին 2023 թվականի դեկտեմբերի 11-ի N 559-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«25» հունվարի 2024 թվական  
քաղաք Մարալիկ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք  
ք. Մարալիկ, հեռ. 0242- 2-16-58, էլ. hawgt@ ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 73-Ա**

<<26>> հունվարի 2024 թվական

քաղաք Մարալիկ

**ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՄԱՆ ԷԴՎԱՐԴԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ  
ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՁԵՐԺԻՆՍԿՈՒ ՓՈՂՈՑ 19 ՀՈՂՄԱՍ, ՁԵՐԺԻՆՍԿՈՒ ՓՈՂՈՑ 19/2  
ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԵՎ ՁԵՐԺԻՆՍԿՈՒ 19/3 ՀՈՂՄԱՍ ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ  
ՄԻԱՎՈՐՎՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՆՈՐ ՕՐՅԵԿՏԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԵՐԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» 29-րդ կետի 2-րդ ենթակետի, 35-րդ և 50-րդ կետերի դրույթներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 37-րդ կետի 1-ին մասի դրույթներով և հաշվի առնելով քաղաքացի Ռոման Էդվարդի Պողոսյանի 2024 թվականի հունվարի 18-ի դիմումը. **որոշում եմ՝**

1. Քաղաքացի Ռոման Էդվարդի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող մարզ Շիրակ, Անի համայնք, ք. Մարալիկ, Ձերժինսկու փողոց, 19 հողամաս հասցեում գտնվող 08-003-0026-0157 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.04 հեկտար, մարզի Շիրակ, համայնք Անի, Մարալիկ ք. Ձերժինսկու փողոց, 19/2 բնակելի տուն հասցում գտնվող 08-003-0026-0158 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային

նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.04 հեկտար, մարզ Շիրակ Անի համայնք, Մարալիկ քաղաք, Ձերժինսկու փողոց, 19/3 հողմաս հասցեում գտնվող 08-003-0026-0175 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,04 հեկտար հարակից հողամասերի միավորման արդյունքում նոր առաջացած հասցեավորման օբյեկտին տրամադրել՝ մարզ Շիրակ, համայնք Անի, Մարալիկ ք. Արկադի Տեր-Թադևոսյան փողոց, 19 բնակելի տուն հասցեն /ծածկագիր՝ 08003X3WXQUE/:

2. Չեղյալ համարել սույն որոշման 1-ին կետում նշված առանձին գույքային միավորներին նախկինում տրամադրված՝ մարզ Շիրակ, համայնք Անի, Մարալիկ ք. Ձերժինսկու փողոց, 19 հողամաս, մարզի Շիրակ, համայնք Անի, Մարալիկ ք. Ձերժինսկու փողոց, 19/2 բնակելի տուն, մարզ Շիրակ, Անի համայնք, Մարալիկ ք. Ձերժինսկու 19/3 հողամաս հասցեները:

3. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ  
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«26» հունվարի 2024 թվական  
Քաղաք Մարալիկ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք  
ք. Մարալիկ, հեռ. 0242- 2-22-37

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 74-Ա**

<<26>> հունվարի 2024 թվական

քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ  
ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-  
003-0034-0001/ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի>> 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ կետերի դրույթներով **որոշում եմ՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում /կադաստրային ծածկագիր 08-003-0034-0001/ գտնվող Անի համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 0.003043 հա հողամասին և նրանում առկա ավտոտնակին տրամադրել հետևյալ հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, Մարալիկ քաղաք, Մ.Մադաթյան փողոց, թիվ 15/14 ավտոտնակ :

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ  
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«26» հունվարի 2024 թվական  
Քաղաք Մարալիկ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք  
ք. Մարալիկ, հեռ. 0242- 2-22-37

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 75-Ա**

<<26>> հունվարի 2024 թվական


քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ  
ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-  
003-0037-/ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի>> 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ կետերի դրույթներով **որոշում եմ՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում /կադաստրային ծածկագիր 08-003-0037-/ գտնվող Անի համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 0.03505 հա հողամասին և նրանում առկա շինությանը տրամադրել հետևյալ հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, Մարալիկ քաղաք, Շիրակացու փողոց, թիվ 95/1 հողամաս:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ  
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«26» հունվարի 2024 թվական  
Քաղաք Մարալիկ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ  
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

«Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, Մաղաթյան 1  
Հեռ. (0242)2-24-00, (0242)2-22-37, (044)04-50-50»

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«26» «*հունվար*» 2024 թվական N 76 -Ա

**1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ**

«Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ «Օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ օրենսգրքի 219՝ հոդվածով, 2024 թվականի հունվարի 24-ին, ժամը 11:00-ին Մարալիկ քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, «Մարգուշ Գևորգյան» ԱԶ-ի տնօրեն Մարգուշ Գևորգյանի (հասցե՝ «Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Ձերժինսկի 16) բացակայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ «Շիրակի մարզի, Անիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի աշխատակիցների կողմից 2024 թվականի հունվարի 08-ին կազմված, «Մարգուշ Գևորգյան» ԱԶ-ի կողմից Օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 2.1 կետով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի:

**2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ  
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

Անի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի աշխատակիցների կողմից օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմվել է «Մարգուշ Գևորգյան» ԱԶ-ի կողմից Օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 2.1 կետով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2024 թվականի հունվարի 08-ին բացահայտվել և արձանագրվել է, որ «Մարգուշ Գևորգյան» ԱԶ-ի կողմից 43.1-րդ հոդվածի 2.1 մասով կատարվել է

իրավախախտում, մասնավորապես՝ առանց աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրի, գործունեության արդյունքում գոյացած աղբը հեռացվել և տեղափոխվել է Ձերժինսկի 16 հասցեից:

<<Մարգուշ Գևորգյան>> ԱԶ-ի տնօրեն Մարգուշ Գևորգյանը կազմված արձանագրության մեջ նշել է, որ հրաժարվում է ծանոթանալ արձանագրությանը և վերցնել իր օրինակը:

Կազմված արձանագրության հիման վրա 2024 թվականի հունվարի 24-ին ժամը 11:00-ին հրավիրվել է վարչական վարույթ: Վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է <<Մարգուշ Գևորգյան>> ԱԶ-ի տնօրեն Մարգուշ Գևորգյանին՝ փոստային ծառայության միջոցով:

<<Մարգուշ Գևորգյան>> ԱԶ-ի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքը ապացուցված է 2024 թվականի հունվարի 08-ին պատշաճ կարգով կազմված արձանագրությամբ:

Օրենսգրքի 43.1 հոդվածի 2.1 կետի համաձայն՝

Առանց աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրի աղբը տեղափոխելը և հեռացնելը (թափելը) կամ պայմանագրով սահմանված վայրից (տեղից) դուրս աղբը հեռացնելը (թափելը)՝

առաջացնում է տուգանքի նշանակում իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:

2.2. Սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված խախտումը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո կրկին կատարելը մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացնում է սեփական լիազորությունները՝ կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ ամբողջությամբ հաստատված եմ համարում այն փաստը, որ <<Մարգուշ Գևորգյան>> ԱԶ-ի կողմից թույլ է տրվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 2.1-րդ կետով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

### 3. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 37-րդ, 48-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 305-րդ և <<Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդված, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով,



«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

### ՈՐՈՇԵՑԻ

1. «Մարգուշ Գևորգյան» ԱԶ-ին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100.000 /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել «Մարգուշ Գևորգյան» ԱԶ-ին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Մարգուշ Գևորգյան» ԱԶ-ին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
4. Սույն որոշումը կարող է գանգատարկվել «Մարգուշ Գևորգյան» ԱԶ-ի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:
5. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը «Մարգուշ Գևորգյան» ԱԶ-ի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում Անի համայնքապետարանի թիվ 900495101124 հաշվեհամարին, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում:
6. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ  
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

«Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, Մաղաթյան 1  
Հեռ. (0242)2-24-00, (0242)2-22-37, (044)04-50-50»

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«26» Հունիս 2024 թվական N 77 -Ա

**1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ**

«Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ «Օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ օրենսգրքի 219՝ հոդվածով, 2024 թվականի հունվարի 24-ին, ժամը 11:15-ին Մարալիկ քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, «Մանուկ ժաժոյան» ԱԶ-ի տնօրեն Մանուկ ժաժոյանի (հասցե՝ «Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Ձերժինսկի 16) բացակայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ «Շիրակի մարզի, Անիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի աշխատակիցների կողմից 2024 թվականի հունվարի 08-ին կազմված, «Մանուկ ժաժոյան» ԱԶ-ի կողմից Օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 2.1 կետով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

**2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ  
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

Անի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի աշխատակիցների կողմից օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմվել է «Մանուկ ժաժոյան» ԱԶ-ի կողմից Օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 2.1 կետով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2024 թվականի հունվարի 08-ին բացահայտվել և արձանագրվել է, որ «Մանուկ ժաժոյան» ԱԶ-ի կողմից 43.1-րդ հոդվածի 2.1 մասով կատարվել է իրավախախտում, մասնավորապես՝ առանց աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրի, գործունեության արդյունքում գոյացած աղբը հեռացվել և տեղափոխվել է Ձերժինսկի 16 հասցեից:

«Մանուկ ժաժոյան» ԱԶ-ի տնօրեն Մանուկ ժաժոյանը կազմված արձանագրության մեջ նշել է, որ հրաժարվում է ծանոթանալ արձանագրությանը և վերցնել իր օրինակը:

Կազմված արձանագրության հիման վրա 2024 թվականի հունվարի 24-ին ժամը 11:15-ին հրավիրվել է վարչական վարույթ: Վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է «Մանուկ ժաժոյան» ԱԶ-ի տնօրեն Մանուկ ժաժոյանին՝ փոստային ծառայության միջոցով:

«Մանուկ ժաժոյան» ԱԶ-ի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքը ապացուցված է 2024 թվականի հունվարի 08-ին պատշաճ կարգով կազմված արձանագրությամբ:

Օրենսգրքի 43.1 հոդվածի 2.1 կետի համաձայն՝

Առանց աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրի աղբը տեղափոխելը և հեռացնելը (թափելը) կամ պայմանագրով սահմանված վայրից (տեղից) դուրս աղբը հեռացնելը (թափելը)՝

առաջացնում է տուգանքի նշանակում իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:

2.2. Սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված խախտումը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո կրկին կատարելը մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացնում է սեփական լիազորությունները՝ կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ ամբողջությամբ հաստատված են համարում այն փաստը, որ «Մանուկ ժաժոյան» ԱԶ-ի կողմից թույլ է տրվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 2.1-րդ կետով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

### 3. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 37-րդ, 48-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 305-րդ և «Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

### ՈՐՈՇԵՑԻ

1. «Մանուկ ժաժոյան» ԱԶ-ին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100.000 /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել «Մանուկ ժաժոյան» ԱԶ-ին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Մանուկ ժաժոյան» ԱԶ-ին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
4. Սույն որոշումը կարող է գանգատարկվել «Մանուկ ժաժոյան» ԱԶ-ի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:
5. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը «Մանուկ ժաժոյան» ԱԶ-ի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում Անի համայնքապետարանի թիվ 900495101124 հաշվեհամարին, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում:
6. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ  
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

«Հ Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, Մաղաթյան 1  
Հեռ. (0242)2-24-00, (0242)2-22-37, (044)04-50-50»

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«26» «հունվար» 2024 թվական N 78 -Ա

**1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ**

«Հ Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ օրենսգրքի 219՝ հոդվածով, 2024 թվականի հունվարի 24-ին, ժամը 11:45-ին Մարալիկ քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, «Հասմիկ Ավդալյան» ԱԶ-ի տնօրեն Հասմիկ Ավդալյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Ձերժինսկի 14) բացակայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ ՀՀ Շիրակի մարզի, Անիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի աշխատակիցների կողմից 2024 թվականի հունվարի 08-ին կազմված, «Հասմիկ Ավդալյան» ԱԶ-ի կողմից Օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 2.1 կետով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի:

**2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ  
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

Անի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի աշխատակիցների կողմից օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմվել է «Հասմիկ Ավդալյան» ԱԶ-ի կողմից Օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 2.1 կետով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2024 թվականի հունվարի 08-ին բացահայտվել և արձանագրվել է, որ «Հասմիկ Ավդալյան» ԱԶ-ի կողմից 43.1-րդ հոդվածի 2.1 մասով կատարվել է իրավախախտում, մասնավորապես՝ առանց աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրի, գործունեության արդյունքում գոյացած աղբը հեռացվել և տեղափոխվել է Ձերժինսկի 14 հասցեից:

«Հասմիկ Ավդալյան» ԱԶ-ի տնօրեն Հասմիկ Ավդալյանը կազմված արձանագրության մեջ նշել է, որ հրաժարվում է ծանոթանալ արձանագրությանը և վերցնել իր օրինակը:

Կազմված արձանագրության հիման վրա 2024 թվականի հունվարի 24-ին ժամը 11:45-ին հրավիրվել է վարչական վարույթ: Վարչական վարույթի լուսմների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է «Հասմիկ Ավդալյան» ԱԶ-ի տնօրեն Հասմիկ Ավդալյանին՝ փոստային ծառայության միջոցով:

«Հասմիկ Ավդալյան» ԱԶ-ի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքը ապացուցված է 2024 թվականի հունվարի 08-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ:

Օրենսգրքի 43.1 հոդվածի 2.1 կետի համաձայն՝

Առանց աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրի աղբը տեղափոխելը և հեռացնելը (թափելը) կամ պայմանագրով սահմանված վայրից (տեղից) դուրս աղբը հեռացնելը (թափելը)՝

առաջացնում է տուգանքի նշանակում իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:

2.2. Սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված խախտումը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո կրկին կատարելը մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացնում է սեփական լիազորությունները՝ կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ ամբողջությամբ հաստատված են համարում այն փաստը, որ «Հասմիկ Ավդալյան» ԱԶ-ի կողմից թույլ է տրվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 2.1-րդ կետով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

### 3. ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 37-րդ, 48-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 305-րդ և «Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

### ՈՐՈՇԵՑԻ

1. «Հասմիկ Ավդալյան» ԱԶ-ին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100.000 /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել «Հասմիկ Ավդալյան» ԱԶ-ին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հասմիկ Ավդալյան» ԱԶ-ին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
4. Սույն որոշումը կարող է գանգատարկվել «Հասմիկ Ավդալյան» ԱԶ-ի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:
5. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը «Հասմիկ Ավդալյան» ԱԶ-ի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում Անի համայնքապետարանի թիվ 900495101124 հաշվեհամարին, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում:
6. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, Մաղաթյան 1, էլ. հասցե՝ www.anicity.am

Հեռ. (0242)2-24-00, (0242)2-22-37 (044)04-50-50

«26» հունվարի 2024 թ.

Քաղաք Մարալիկ

**ՈՐՈՇՈՒՄ N 79-Ա**

26 հունվարի 2024 թվականի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ, ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
ՕՐՅԵԿՏՆԵՐՈՒՄ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ԱՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 30-ի N102-Ն որոշումը.

**Որոշում եմ**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական սահմաններում առկա առևտրի, հանրային սննդի, կենցաղային սպասարկաման օբյեկտների հաշվառում և հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել մշտական գործող հանձնաժողով հետևյալ անահատական կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հեպոյան Վաչագան – Անիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Հանձնաժողովի անդամներ՝

Բրուտյան Մառուսյա - Անիի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի,



տուրիզմի և առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետի  
ժամանակավոր պաշտոնակատար,

Գրիգորյան Լուսինե – Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական  
տեխնոլոգիաների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

Պողոսյան Գագիկ- Անիի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և  
բնապահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

Քոչարյան Արմեն – Անիի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի,  
տուրիզմի և առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի առաջին կարգի  
մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,

Չախալյան Լիանելա – Անիի համայնքապետարանի աշխատակազմի օպերատոր,

Անտոնյան Հայկ – Անիի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի,  
սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետի  
ժամանակավոր պաշտոնակատար,

Օլեյան Վիլհելմ – Անիի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և  
բնապահպանության բաժնի երկրորդ կարգի մասնագետի ժամանակավոր  
պաշտոնակատար,

## 2. Հանձնաժողովի նախագահ Վաչագան Հեպոյանին

ա) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական սահմաններում  
առկա առևտրի, հանրային սննդի, կենցաղային սպասարկման օբյեկտների հաշվառման և  
հսկողության աշխատանքներն իրականացնել «Տեղական ինքնակառավարման  
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,  
«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ  
հոդվածի, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ  
հոդվածի 1-ին մասի դրույթներով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի  
համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 30-ի N102-Ն որոշման համաձայն:

3. Հսկողությունն իրականացնել տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման  
գրանցամատյանի միջոցով համաձայն՝ հավելվածի:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«26» հունվարի 2024թ  
Քաղաք մարտիկ